

Ձեռչերի և հավելավճարների համակարգ (Բոնուս-Մալուս համակարգ)

Ձեռչերի և հավելավճարների (Բոնուս-Մալուս համակարգ) համակարգն իրենից ներկայացնում է ապահովադրի (և/կամ վարորդի) ռիսկի գնահատման մեխանիզմ, որի միջոցով փոփոխության է ենթարկվում ապահովագրավճարը՝ կախված տվյալ ապահովագրական պայմանագրի գծով գրանցված և այդ պայմանագրի կնքմանը նախորդող որոշակի ժամանակահատվածի ապահովագրական պատահարների պատմությունից (և/կամ վարորդի անհատական «վարորդական պատմությունից»):

Ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների համակարգը (Բոնուս-Մալուս համակարգ) կիրառվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո կնքված (երկարաձգված) ԱՊՊԱ պայմանագրերի նկատմամբ: